
ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԹՈՒՐԳԻՈՅ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 1923-
1939 ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒՆ

ՄԻՐՕՂԼՈՒ ԱՐՄԱԻԵՆԻ (Թուրքիա, ք. Ստամբուլ)
Մաս II

Էլզա Նիկոյի դեպքը: Թուրքիոյ Հրեաները, որոնք շատաւիղներն են Սպանիական հաւատաքննութենէն ճողոպրած տարագիրներուն, Պոլիս ապաստանած են 1492 թ.: Կը խօսին հրեական սպաներէն մը (latino), բայց կը խօսին նաեւ ֆրանսերէն, որ իրենց դպրոցներուն մէջ ընդունուած է իբրեւ ուսուցման լեզու⁵⁵:

Թուրքիոյ Հանրապետութեան Միակուսակցական շրջանին Թուրքիոյ Հրեաներուն համար ճակատագրական արդիւնք կ'ունենայ «Էլզա Նիկո»-ի դեպքը: Թուրք փաշայի մը 42 տարեկան տղան՝ Օսման Բաթըլ կը սիրահարի 22 տարեկան Հրեայ աղջկան մը՝ Էլզա Նիկոյին եւ կ'առաջարկէ ամուսնութիւն: Սակայն աղջիկը հաւանութիւն չի յայտնէր Թուրքին այս առաջարկին եւ կը նշանուի Հրեայ երիտասարդի մը հետ: 17 Օգոստոս 1927 թ., երբ Էլզա իր քրոջ հետ գործէն տուն կը վերադառնայ, Օսման զայրացած, կամուրջին վրայ գազանաբար կը սպաննէ Էլզա Նիկոյին: Այս սպանութիւնը մեծ գրգռութիւն կը յառաջացնէ Պոլսոյ Հրեաներուն մէջ եւ ցոյցեր կը կատարեն աղջկան յուղարկաւորութեան օրը: Այս առթիւ կը ձեռքաւորուին ու դատարան կը յա՛նձնուին բազմաթիւ Հրեաներ եւ Թուրք թերթերը (Ճումհուրիյէթ, Միլլիյէթ, Սօն Սաաթ եւ Վազըթ) բուռն յարձակում մը կը սկսեն Թուրքիոյ Հրեաներուն դէմ⁵⁶:

29 Օգոստոս 1927 թ. սկսեալ Հրեաներուն կ'արգիլուի երկրին մէջ ազատ երթելակել: Այս ձեռով Հրեայ վաճառականներուն տնտեսական գործառնութիւններուն ալ արգելք դնելով կը նպատակուի Յոյն ու Հայերէն բացուած ոլորտները լեցնել Թուրք վաճառականներով: Չարտօնուիր քաղաք վերադառնալ որեւէ պատճառով Կ. Պոլսէն դուրս գտնուող Հրեաներուն: Այս կիրառումը թէեւ կարճ կը տեւէ, բայց երթելակելու արգելքը կը շարունակուի եւ «երթելակելու փաստաթուղթ» առնելու պարտաւորութիւն կը գործադրուի, որն սակայն ձեռք բերելը շատ դժուար կ'ըլլայ: Այս կիրառումը, որ բոլորովին ներհակ է Լօզանի պայմանագրի 38 յօդուածին⁵⁷, վերջ կը գտնէ միայն Հրեայ համայնքէն կազմուած յանձնախումբի մը Անգարայի պաշտօնական մարմիններու տուած այցելութենէն վերջ⁵⁸:

⁵⁵ Ռէվիլլը Լուի, *Հրեաները (Յառաջ, 16.II.1938)*:

⁵⁶ Okutan M. Cağatay, *Tek Parti Doneminde Azınlık Politikaları*, İstanbul, 2004, s. 239.

⁵⁷ Ոչ իսլամ փոքրամասնութիւնները, պիտի օգտուին բոլոր թուրք հպատակներուն նման ազատ երթելակելու եւ գաղթելու իրաւունքէն (թուրք կառավարութեան կողմէ ազգային ինքնապաշտպանութեան նպատակով եւ կամ հասարակութեան կարգապահութեան համար երկրի ամբողջութեան կամ մէկ մասին վրայ միջոցառումներ կատարելու իրաւունքէն դուրս մնալու պայմանաւ):

⁵⁸ Okutan M. Cağatay, *հշուած աշխ.*, էջ 240-241:

Միակուսակցական շրջանին կառավարութեան կողմէ քաջալերուած նման ճնշումներ կը կատարուին նաեւ «Իրաւաբանական Ուսանողաց Միութեան» եւ անոր աջակցող «Թիւրք Օճաղը»-ներուն կողմէ, որոնք «Քաղաքացի՝ թրքերէն խօսէ» վերտառութեամբ կարմիր գոյնով նշանատախտակներ կը կախեն շոգենաւներուն եւ հանրակառքերուն մէջ եւ տարբեր լեզուով խօսողներուն կը յարձակին⁵⁹։ Որպէս արդիւնք այս տեսակի եւ նման ճնշումներուն, փոքրամասնութիւնները կը ջանան համակերպիլ այս կացութեան։ 1928 թուակիր թերթերէ կը տեղեկանանք, թէ Պոլսոյ մէջ կը կազմուի ընկերութիւն մը «Ազգային Մշակոյթի Միութիւն» անունով, որուն նպատակը կ'ըլլայ Թուրք մշակոյթը ուժեղացնել երկրի մէջ եւ առողջ ձուլում մը ապահովել տարրերու միջեւ։

Այդ միութեան կ'անդամակցի Մոհիգ Գոհէն՝ (Թէքին Ալի), որ Զիյա Կեօքալփի⁶⁰ մօտիկ աշխատակիցն էր եւ համաթրքական շարժման ամենէն հեղինակաւոր դէմքերէն մէկը։ 1928-ին ան կը հրատարակէ «Թրքացում» անուն աշխատութիւն մը՝ (մշակոյթի մասին տեղեկագիր մը) որուն մէջ Թուրքիոյ Հրեայ քաղաքացիներուն կ'ուղղէ նոր տասնաբանեայ մը, որպէս զի անոնք մասնակից ըլլան Թուրք ազգային միութեան հիմը հանդիսացող «հասարակաց խիղճ»-ին։ Այս 10 պատուէրներն են. 1. անուններդ թրքացուր, 2. թրքերէն խօսէ, 3. սինակոկներուն (աղօթատեղի) մէջ աղօթքներուն գոնէ մէկ մասը Թրքերէն ըրէ, 4. դպրոցներդ թրքացուր, 5. տղաքդ Պետական վարժարան դրկէ, 6. երկրին գործերուն մասնակցէ, 7. թուրքերուն հետ յարաբերութիւն հաստատէ. 8. համայնքի հոգեբանութիւնը արմատախիլ ըրէ, 9. ազգային տնտեսութեան ասպարէզին մէջ մասնաւոր պարտականութիւններ կատարէ, 10. իրաւունքդ գիտցիր⁶¹։

Թրքացման քաղաքականութեան տնտեսական հանգրուաններէն մէկն ալ կ'ըլլայ 4 Յունիս 1932-ին Թուրքիոյ Ազգային Մեծ Ժողովին մէջ ընդունուող 2007 համար «Թուրքիոյ մէջ Թուրք Հայրենակիցներուն Յատուկ Արհեստ եւ Ծառայութիւններու մասին Օրէնքը»։ Այս օրէնքին համաձայն միայն Թուրք քաղաքացիներուն յատուկ կ'ըլլան հետեւեալ արհեստները. առետուրի միջնորդ, սափրիչ, նկարահան, երաժիշտ, հագուստ եւ կօշիկ արտադրող, սակարանի պաշտօնեայ, թարգմանիչ, շինարար, շարժավար, շարժավարի օգնական, անասնաբոյժ, տարրաբան, երկաթագործ, աստղձագործ, դերձակ եւլն։ Այս օրէնքին գործադրութենէն ազդուող շուրջ 9.000 Յոյներ 1934 թ. Յունաստան կը գաղթեն⁶²։

Կառավարութիւնը 1933 թ. Յունիսին օրինագիծ մը կը պատրաստէ՝ փոքրամասնութեանց ներքին գործերը վարելու համար։ Այս նոր օրինագիծով աւելի կը կրճատուին այն իրաւասութիւնները, զոր կը վայելէին ոչ-իսլամ փոքրամասնութիւնները (Հայ, Յոյն, Հրեայ)։

⁵⁹ Յառաջ, 2.III.1928:

⁶⁰ Բանթուրքիզմի եւ բանիսլամիզմի գաղափարախօս, որուն գաղափարները տեսլական հիմք հանդիսացան երիտթուրքերու համար իրագործելու հայերու ցեղասպանութիւնը։

⁶¹ Aktar Ayhan, Varlık Vergisi ve Türkleştirme Politikaları, İstanbul, 2000, s. 130.

⁶² Okutan M. Çağatay, նշուած աշխ., էջ 220-221:

Այս օրինագիծին համաձայն հիւանդանոցներ ու դպրոցներ կը կառավարուին «Բարեփառական ընկերութեանց օրէնքին» համաձայն պատկանեալ մարմիններու ձեռքով, կը ջնջուին Ազգային եւ Քաղաքական Ժողովները, Ուսումնական եւ Թաղական Խորհուրդները, դպրոցական Հոգաբարձութիւնները եւ Պատրիարքներն ու Խախամապետն ալ կը դառնան պարզապէս հոգեւոր հովիւներ⁶³: Ապա կը յետեւուի, որպէս զի փոքրամասնութեանց վարչական իշխանութիւնները ինքնաբերաբար ձեռնարկեն համայնքային գործերը կառավարութեան տեսակէտին պատշաճեցնելու համար⁶⁴:

Իրենց բարոյական եւ կրօնական բովանդակ կապը պահելով հանդերձ Պատրիարքարաններու եւ Խախամապետարանին հետ, մատակարարական տեսակէտէ կ'ենթարկուին Վազֆներու վարչութեան հակակշռին, ըստ 5404 թիւ օրէնքի տրամադրութիւններուն:

Ձետեղման օրէնքը և փոքրամասնությունները: 22 Մարտ 1934 թ. եւ 2393 համար օրէնքով Թրաքիոյ մէջ կը կազմուի Քննիչներու Ընդհանուր Յանձնախումբ մը, որմէ վերջ Թուրքիոյ Ազգային Մեծ Ժողովը 14 Յունիս 1934 թ. կ'ընդունի 2510 համար «Գաղթականներու եւ Ապաստանեալներու Ձետեղման Օրէնքը», որը 21 Յունիս 1934 թ. հրատարակուելով, գործադրութեան կը դրուի: Ըստ այս օրէնքին, եկող գաղթական եւ ապաստանեալներու Ներքին գործաւարութեան կողմէ պատրաստուող եւ Գործաւարներու Խորհուրդին կողմէ վաւերացուող քարտէսին համաձայն զետեղման տեսակէտէ Թուրքիա կը բաժնուի երեք շրջանի.

- Թիւ 1 շրջան - Այն վայրերն են, ուր կը նախատեսուի խտացնել՝ Թուրքական մշակոյթին տէր բնակչութիւն

- Թիւ 2 շրջան - (Ձուլման ենթարկուելիք շրջան) Այն վայրերն են, ուր կը նախատեսուի փոխադրել ու զետեղել այն բնակչութիւնը, որոնց կը փափաքուի ներկայացնել Թուրքական մշակոյթը

- Թիւ 3 շրջան - (Արգիլուած գօտի) Այն վայրերն են, որոնք զետեղման ու բնակման համար արգիլուած վայրեր կը դասուին զանազան պատճառներով (տեղական, առողջապահական, տնտեսական, մշակութային, զինուորական եւ կարգապահական):

Ինչպէս կը հասկցուի այս յօդուածէն ալ «Գաղթականներու եւ Ապաստանեալներու Ձետեղման Օրէնքին» մէջ կարեւորագոյնը «Թուրք մշակոյթը իւրացնելը» կ'ըլլայ:

Օրէնքի 7-րդ յօդուածը կը բաղկանայ հետեւեալ հատուածներէն. ա) թուրք ցեղէ եղող այն գաղթականներն ու ապաստանեալները, որոնք գրաւոր կերպով կը յայտնեն թէ կառավարութենէն զետեղման օգնութիւն չեն ուզեր, ազատ կը ձգուին Թուրքիոյ մէջ իրենց ուզած տեղը հաստատուելու: Իսկ անոնք, որոնք կառավարութենէն զետեղման օգնութիւն կ'ուզեն, պարտաւոր են անոր ցոյց տուած տեղերը երթալու:

Առանց արտօնութեան տեղափոխուողները կը գրկուին հպատակութենէ. բ) թուրք ցեղէ չեղողները եթէ նոյնիսկ օգնութիւն չպա-

⁶³ Հայաստանի Կոչնակ, 1933, էջ 654:

⁶⁴ Յառաջ, 18.IX.1934:

հանջէն կառավարութենէն, պարտաւոր են անոր ցոյց տուած տեղն հաստատել իրենց բնակութիւնը եւ չբաժնուիլ այն տեղերէն, առանց կառավարութեան արտօնութեան: Առանց արտօնութեան ուրիշ տեղ գացողները առաջին անգամուն կը վերադարձուին իրենց տեղերը, իսկ կրկնութեան պարագային Գործավարներու Խորհուրդին որոշումով, Թուրք հպատակութենէ կը հեռացուին⁶⁵:

9-րդ յօդուածը ներքին գործավարին լիազօրութիւն կուտայ, Թուրքիոյ հպատակ եղող շրջուն գնչուները եւ թուրք մշակոյթին չյարող վաչկատունները, հաւաքաբար չըլլալու պայմանով ցրուելու եւ գետեղելու՝ գիւղաքաղաքներու եւ թուրք մշակոյթ ունեցող գիւղերու մէջ, հեռացնել սահմանագլուխներէն այն անձանց, որոնց լրտեսութեան մասին կասկածներ յառաջացած են եւ ազգային սահմաններէն դուրս հանել՝ օտարահպատակ շրջուն գնչուները եւ թըրքական մշակոյթը չիրացնող վաչկատունները:

Իսկ նոյն օրէնքի 11-րդ յօդուածի ա եւ բ տարբերակները կարգ մը միջոցներ կը նախատեսէ այն անձանց համար, որոնք չեն իւրացներ Թուրք լեզուն, մշակոյթն ու գաղափարախօսութիւնը: Այդ միջոցներն են հետեւեալները. ա) կ'արգիլուի հաւաքաբար նոր գիւղ կամ թաղ ստեղծել, աշխատատրական կամ մշակութային խումբեր կազմել կամ արուեստ մը իր ազգակիցներուն փոխանցել, բոլոր անոնց, որոնց մայրենի լեզուն թըրքերէն չէ, բ) զինուորական, քաղաքական, գործնական եւ կարգապահական պատճառներով, Գործավարներու Խորհուրդի որոշմամբ, Ներքին գործավարը պարտաւոր կ'ըլլայ միջոցներ (հաւաքաբար չըլլալու պայմանաւ ներառեալ նաեւ ուրիշ բնակավայրեր փոխադրել կամ քաղաքացիութենէ հեռացնել) ձեռնարկել, այն անձանց մասին, որոնք Թուրք մշակոյթը չեն իւրացուցած կամ Թուրք մշակոյթը իւրացուցած ըլլալով հանդերձ Թըրքերէնէն տարբեր լեզուներ կը խօսին, գ) գիւղաքաղաքներու եւ քաղաքներու մէջ հաստատուած օտարահպատակներուն թիւը չկրնար բարձր ըլլալ՝ թաղապետութեան սահմաններուն մէջ գտնուող ամբողջ բնակչութեան հարիւրէն տասնէն⁶⁶: Այսպէս՝ պետութեան սահմաններէն ներս ազգային-մշակութային միութեան համար փոքրամասնութեանց ձուլման առընթեր, գործադրուած տարբեր միջոց մըն ալ կ'ըլլայ գաղթի ու գետեղման քաղաքականութիւնը: 1929-1934 թ. միջեւ Փոքր Ասիոյ գիւղերուն մէջ, տեղի իշխանութիւնները Հայ բնակիչներուն կը ճնշեն, որպէս զի անոնք գաղթեն կեդրոնական քաղաքներ: Հայ գիւղացիները չեն կրնար համակերպիլ քաղաքային միջավայրին, չեն յաջողիր ապահովել իրենց ապրուստը ու մեծաւ մասամբ պարտաւոր կը գաղթեն Սուրիա, որոնց հողերը պետութեան կողմէ կը տրամադրուի Պալքաններէն եկող Թուրքներուն⁶⁷:

«Ձեռնեղման Օրէնքի» գործադրութեան դրուելէն շուրջ վեց ամիս առաջ միջին Անատոլիոյ գտնուող Հայերը անգամ մը եւս կ'աքսորու-

⁶⁵ Նոր Հուր, 11.VII.1934:

⁶⁶ Bali Rifat N., 934 Trakya Olayları, Istanbul, 2008, s. 38-39:

⁶⁷ Guven Dilek, Cumhuriyet Donemi Azınlık Politikaları ve Stratejileri Bağlamında 6-7 Eylül Olayları, Istanbul, 2005, s. 131.

ին Ստամպուլ: ԱՄՆ դեսպան Սքիննըրի կողմէ Վաշինգթոն ուղարկուած տեղեկագրի արդիւնքով յայտնաբերուած այս գործադրութեամբ⁶⁸ 1934 տարւոյն սկիզբները, երկու ամսուայ մէջ զանազան քաղաք եւ գիւղերէն Ստամպուլ արտորուող 600 Հայեր, ինչ կը տեղաւորուին եկեղեցիներու, դպրոցներու եւ Օրթագիւղ, Ենիգիւղ ու նման թաղերու լքեալ տուններուն մէջ: Անոնք այս արտորին նախորդող մի քանի տարիներու ընթացքին տեղի իշխանութեանց կողմէ ճնշման կենթարկուին, որպէս զի թաքուն մնայ այս գործին պետական ուղղուածութիւնը: Թուրք ոստիկանը նախ կը ջանայ տեղւոյն մահմետականները գրգռել Հայերուն դէմ, ըսելով թէ «կեաւորներուն» վնասողները պիտի ըլլան տեղացի ժողովուրդ: Կառավարութեան այս փորձը յաջողութեամբ չի պսակուիր: Ըստ Ամերիկեան դեսպանատան ասոր պատճառը տեղացի Թուրքերու եւ Հայերու միջեւ հաստատուած լաւ յարաբերութիւնն է: Նման փորձ մը կը կատարուի Պալքաններէն եկող գաղթականներուն եւ Հայերուն յարաբերութիւնները խանգարելու համար, բայց նոյնպէս չի յաջողիր: Ասկէ վերջ, Հայերուն կը հրահանգուի անմիջապէս գաղթել Ստամպուլ, արտօնելով վաճառել իրենց գոյքերը: Արտօնութիւնը սակայն կ'ըլլայ խաբուսիկ, քանի որ առաջարկուած գիները այնքան ցած կ'ըլլան, որ տարբերութիւն չունենար ապաստփականացումէն⁶⁹:

Մոյն օրէնքի գործադրութեան թուականէն քանի մը օր վերջ, 24 Յունիս 1934-ին, Հրեայ քաղաքացիները նախ Չանաքկալէ իսկ քանի մը օր վերջ 30 Յունիսին Էտիրնէ, Քըրքլարէլի, Թէքիրտաղ քաղաքներուն եւ այս քաղաքներուն կապուած գիւղաքաղաքներուն, այսինքն բոլոր Թրաքիոյ մէջ, շրջանէն հեռացնելու նպատակով կ'ենթարկուին ճնշումներու, ինչպէս նաեւ բազմանդամ խումբերու կողմէ կը թալանուի անոնց տուններն ու գործարանները: Այս դէպքերը, որ պատմութեան մէջ կը յիշուին որպէս «Թրաքիոյ դէպքեր» եւ Հրեաներուն կողմէ կ'անուանուին «Ֆուրթունա», կը հակակշռուին միայն Յուլիսի 5-ին՝ երբ վարչապետ Իսմէթ Ինէժոնի Ազգային Մեծ Ժողովի մէջ իր խօսակցութեան ընթացքին կանխօրէն դէպքերը⁷⁰: Տ'այսօր չէ յայտնաբերուած, թէ ովքե՞ր էին կազմակերպիչը այս ճնշումներուն ու դէպքերուն: Սակայն պարզ է, որ իսլամներու ցոյց տուած թշնամական վերաբերմունքին իբրեւ հետեւանք Թուրքիոյ Հրեաները, որոնք շառաւիղներն են սպանիական հաւատաքնութենէն ճողոպրած տարագիրներուն, կը հարկադրուին գաղթել Թրաքիայէն դէպի Ստամպուլ:

«Ձեռնդման Օրէնքի» նպատակներէն մէկը կ'ըլլայ՝ գուցէ ուշացումով, իրաւական գետնի վրայ յենարան մը գտնել Հայերուն Միջին Անատոլիոյէն դրկուելուն: Իսկ գլխաւոր նպատակներէն մէկը կ'ըլլայ Թուրքիոյ մէջ «ցեղային» հիմքերու վրայ հաստատում մը իրականացնել, իսկ երկրորդը՝ պատերազմի հաւանականութեան դէմ ռազմագիտական կարեւորութիւն ունեցող շրջաններու մէջ ապրող

⁶⁸ Okutan M. Cağatay, *նշուած աշխ.*, էջ 250:

⁶⁹ Guven Dilek, *նշուած աշխ.*, էջ 132:

⁷⁰ Bali Rifat N., *նշուած աշխ.*, էջ 1:

փոքրամասնութիւնները փոխադրել ուրիշ տեղեր: Միակուսակցական շրջանի կարեւոր օրէնքներէն մէկն ալ կ'ըլլայ «Մականունի օրէնքը», որ կը հրատարակուի 1934 Յուլիս 2-ին եւ ի գորտ կ'ըլլայ 1935 Յունուար 2-էն սկսեալ, կը պարտաւորէ Թուրքիոյ բոլոր քաղաքացիներուն մինչեւ 1936 Յուլիս 2 թուականը ընտրել մականուն մը: Այս օրէնքով կը ջնջուին նաեւ ոչ-իսլամ քաղաքացիներու մականուններուն ազգորոշ մասնիկները (եան, էվ, ով, իս, իսիս եւլն):

8 Փետրուար 1935 թ. կը կատարուին Թուրքիոյ երեսփոխանական ընտրութիւնները: Մուսթաֆա Քէմալի նախագահութեամբ հանրապետական «Հալք» կուսակցութեան անդամները, Տօլմապահչէի մէջ կը կատարեն նախաընտրական ժողով մը, ուր կ'որոշուի անկախ երեսփոխաններու մէջ փոքրամասնութեանց պատկանող քաղաքացիներու ալ գոյութիւնը⁷¹: Այսպէս, իրենց թեկնածութիւնը կը դնեն ու կ'ընտրուին ոչ-իսլամ քաղաքացիներ եւս, որպէս անկախ երեսփոխան՝ Տքթ. Ապրէ Վայա (Հրեայ) Նիյտէի, Տքթ. Թափթաս (Յոյն) Անգարայի, Սթամաթ Ջիհնի (Յոյն) Էսքիշէիիի եւ Պերճ Քերէսթէճեան (Հայ) Աֆիոն-Գարահիսարի երեսփոխան կ'ըլլան:

Փոքրամասնութեանց իրաւունքները սահմանափակող յաջորդ օրէնքը կ'ըլլայ «Տարազի Օրէնքը», որ կը հրատարակուի 18 փետրուար 1935 թ. եւ գործադրութեան կը դրուի 13 Յունիս 1935 թ. սկսեալ: Օրէնքի գործադրութեան եղանակը ցոյց տուող կանոնագիրը 18 Փետրուար 1935 թ. կը հրատարակուի պաշտօնաթերթին մէջ, ըստ որուն ինչ կրօնքի եւ դաւանութեան ալ պատկանին կղերականները, կրօնական տարազ կրելու իրաւունք կ'ունենան միայն աղօթատեղիներու մէջ եւ արարողութեանց միջոցին: Կառավարութեան կողմէ բացառութիւն կը համարուին եւ արտօնեալ են ամէն կրօնքէ եւ դաւանութենէ միայն մէկական հոգեւորական: Գործավարներու Խորհուրդը 12 Յունիս 1935-ին, օրէնքին մէջ յիշուած այդ արտօնութիւնը կուտայ՝ Թուրքիոյ Կրօնական Գործերու Վերատեսուչին, Յունաց, Հայոց եւ Թուրք Օրթոտոքսներու Պատրիարքներուն, Կաթողիկէ Հայոց Արքեպիսկոպոսին, Խախամապետի Փոխանորդին, Հայ Բողոքականներու Կրօնապետին եւ Կաթողիկէ Յոյն Եպիսկոպոսին⁷²: Արտօնութեան միջոցն աւարտելէ վերջ այդ արտօնութիւնը միեւնոյն հոգեւորականին համար վերանորոգելու եւ կամ ուրիշ հոգեւորականի մը տրուելու գործողութեան վերաբերեալ առաջարկները կ'ըլլան ներքին գործավարութեան կողմէ, իսկ որոշումը կը տրուի Գործավարներու Խորհուրդին կողմէ⁷³:

Մուսա լեռան քառասուն օրը: Ազգութեամբ Հրեայ Ֆրանց Վերֆելի կողմէ 1933 թ. Նոյեմբերին Աւստրիոյ մէջ կը հրատարակուի «Մուսա Լեռան Քառասուն Օրը» վէպը, որուն դէմ շատ մեծ հակահոսանք կը ստեղծուի Թուրքիոյ մէջ: Վէպի հերոսը Կապրիէլ Պակրատեան Անտիոքի Եռոնուօլուք գիւղի բնակիչ հայոց հետ 4 Օգոստոս 1915-ին Մուսա լեռն բարձրանալով կ'իրականացնէ դիմադրութիւն,

⁷¹ Արենէլք, 4.II.1935:

⁷² Macar Elcin, *Cumhuriyet Doneminde Istanbul Rum Patrikhanesi*, Istanbul, 2003, s. 153.

⁷³ Նոր Լուր, 18.II.1935:

որն կը տեւէ 40 օր: Վէպի հրատարակութեան յաջորդող օրերուն հակահոսանք մը կը ստեղծուի՝ նախ Աւստրիոյ եւ Չուիցերիոյ, ապա Թուրքիոյ մէջ: Այս հակակրանքը զագաթնակէտին կը հասնի, երբ 1934 թ. օրակարգի նիւթ կը դառնայ վէպը ֆիլմի վերածելու ձեռնարկը: Թուրք թերթերը լայն սիւնակներ կը տրամադրեն սոյն նիւթին՝ յառաջ քաշելով, թէ անհիմն են թուրքերու դէմ կատարուած ամբաստանութիւնները⁷⁴:

Մամուլի արծարծմամբ նիւթը կը ներկայացուի իբրեւ «Հայ-հրեայ միասնական դաւադրութիւն մը՝ Թուրքիոյ դէմ», քանի որ թէ գրողը՝ Ֆրանց Վերֆել եւ թէ MGM ընկերութեան սեփականատէրերը Հրեաներ էին՝ առաջինը Գերմանիայէն, իսկ երկրորդը Ամերիկային եւ նաեւ վէպը կը քննադատէր 1915 թ. «Հայոց Յեղասպանութիւնը»⁷⁵: Թերթերը զանազան յօդուածներով կը հրահրեն երկու փոքրամասնութեանց հակազդել վէպին եւ անոր ֆիլմի վերածման գործին: «Ճումհուրիյէթ» օրաթերթի խմբագիր Եունուս Նատի իր 12 Դեկտեմբեր 1935 թուակիր խմբագրականով կը յիշեցնէ Թուրքիոյ քաղաքացի Հայ եւ Հրեաներուն՝ նոյնիսկ ուշադրութեան հրաւիրել ԱՄՆ կառավարութիւնը, ուր երկու շաբաթուայ ընթացքին զիրքէն 35.000 օրինակ կը վաճառուի⁷⁶: Օրաթերթերուն մէջ տեղ կը գտնէ նաեւ այն լուրը, որ հայերն ու հրեաները բողոքի ցոյցեր պիտի կատարեն⁷⁷: Չի ուշանար Թուրք թերթերու, ինչպէս նաեւ կառավարութեան թելադրած հակազդեցութիւնները: Հրեաները կ'արտայայտեն՝ զայրոյթ եւ խոր ատելութիւն Վերֆելի դէմ եւ կը յայտնեն, թէ ան Հրեայ հասարակութեան չի պատկանիր: Յաջորդող օրերուն, Պոլսահայոց վարչական ժողովը եւս կը պարտաւորուի նման որոշում մը կայացնել եւ 14 Դեկտեմբեր 1935 թ. նիստ գումարելով կ'որոշէ Պոլսահայոց բողոքն ու ցատումը յայտնել «Քառասուն Օր Մուսա Լերան վրայ» ֆիլմին առթիւ: Յաջորդ օրն իսկ Հայ մտաւորականներու նախաձեռնութեամբ, ազգային երեսփոխան եւ հրապակագիր-երգիծագիր Աշոտ Քէչեանի, Ուսումնական Խորհուրդի քարտուղար Թորոս Ազատեանի եւ նաեւ ուրիշ ազգայիններու առաջնորդութեամբ եւ հայ բազմութեան մը ներկայութեան Բանկալթիի գերեզմանատան մէջ խարոյկի կը դատապարտուի զիրքը եւ հեղինակին պատկերը, ինչպէս նաեւ անէծք կը կարդացուի հայ անունը շահախնդրական նպատակով օգտագործող հեղինակին դէմ: Կրակը կը վառէ «Ազդարար» եւ «Նոր Լուրի» խմբագիրներէն Աշոտ Քէչեան, երբ Լուսաւորիչ երգչախումբը կ'երգէ Հանրապետութեան Քայլերգը: 1936 թ., երբ վէպը կը թարգմանուի ֆրանսերէնի, թուրք թերթերուն մէջ նոյնպէս կը հրատարակուին հակազդեցութիւն ներկայացնող յօդուածներ⁷⁸: Ֆրանց Վերֆելի սոյն վէպը թրքերէնի թարգ-

⁷⁴ **Bali Rıfat N.**, *Musa Dağda Kırk Gün'ün Hikayesi, Tarih ve Toplum, Şubat, 1998, s. 21-23.*

⁷⁵ **Bali Rıfat N.**, *Musa'nın Evlatları Cumhuriyet'in Yurttaşları, İstanbul, 2001, s. 120.*

⁷⁶ *Նոյն տեղէն, էջ 128:*

⁷⁷ **Kurun**, 14.XII.1935.

⁷⁸ **Bali Rıfat N.**, *նշուած աշխ.*, էջ 134:

մանուելով կը հրատարակուի 1997 թ. «Belge» հրատարակչութեան կողմէ⁷⁹:

Վագրֆներու օրէնքն ու փոքրամասնությունները: Վագֆ բառացի իմաստով կը նշանակէ յատկացում: Բայց դատելով իրաւական սկզբունքէն վագրֆ եւ յատկացում (ֆոնտասիոն) ունին հիմնական տարբերութիւններ՝ մանրամասնութիւններու եւ գործադրութեան ձեւերու մէջ: Վագֆը այն սեփականութիւնն է, որ սեփականատիրոջ կողմէ տրուած է կրօնական կամ բարեգործական կարիքներու համար՝ համայնքին, պետութեան կամ մասնաւոր անձին: Վագֆը, իսլամ աստուածպետական (շէր'ի) տեսութիւններէն ծագում առած, արեւելեան իրաւագիտութեան յատուկ ընկերային հարց մըն է⁸⁰:

Լոզանի դաշնագրէն առաջ, անկեալ Օսմանեան կայսրութեան շրջանին գոյութիւն չունենար «Կտակի» վերաբերեալ որոշ եւ վճռական օրէնք մը եւ ոչ-իսլամներու կրօնական եւ աշխարհիկ բոլոր գործերուն նման վագֆային (կտակային) գործերն ալ ֆերմաններով կը կատարուէին: Իսկ Լոզանէն վերջ Հանրապետական կառավարութիւնը ոչ-իսլամական վագֆներու գործունէութեան մասին շուրջ 12 տարիներ առանց որեւէ կանոնաւորում կատարելու, հարցերը կը լուծէ օրուան պէտքերուն կապուած քաղաքական որոշումներով:

13 Մարտ 1934-ին հրատարակուած «Վագֆ կալուածներուն, հողերուն եւ հասոյթներուն վարձակալութեան եւ մատակարարութեան վերաբերեալ» օրէնքով (որն կը պարունակէ 3 յօդուածներ) եւ 24 Մայիս 1934-ին գործադրութեան դրուած կանոնագրով կը ճշդորոշին վագֆ գոյքերուն բարութ մատակարարութեան եւ վարձակալութեան պայմանները: Այս օրէնքի տրամադրութեանց համաձայն, որ վագֆներու մատակարարութեան հարցը կը ձեռքագատէ աստուածպետական դրութենէն, վարձակալութեան պայմանագրութիւնները կը կնքուին աճուրդով, որ կը կատարուի Էվգաֆի տնօրէնութիւններուն կողմէ կազմուած յանձնաժողովներու միջոցաւ եւ միւթէվէլիներու ներկայութեամբ: Աճուրդը կը կատարուի կամ հրապարակային (այն վայրերու համար, որոնց տարեկան վարձքը կը գնահատուի մինչեւ 5.000 ոսկի) եւ կամ գոց պահարանի դրութեամբ: Ընտրեալ մարմինները, միւթէվէլիները պարտաւոր կ'ըլլան աճուրդով վարձու տալ կամ ծախել՝

- այն շէնքերը, որոնք պարապ մնացած են,
- այն կալուածները, որոնց վարձակալներուն հետ օրէնքի սահմանին մէջ չեն կրցած համաձայնիլ,
- այն հունձքերը եւ բերքերը, որոնք կանոնագրին տրամադրութիւններով բացառութիւն չեն կազմեր⁸¹:

⁷⁹ Նոյն տեղէն, էջ 137:

⁸⁰ Գույումճեան Լ., Վագֆներու օրէնքը եւ գործադրութեան ձեւը, Ընդարձակ Տարեգիրք Ս. Փրկիչ Հիւանդանոցի, Ստամպուլ, 1948, էջ 211:

⁸¹ Գույումճեան Լ., Վագֆներու մատակարարութիւնը (Գ) (Ազդարար 4. VI. 1936):

Էվգաֆի տնօրէնութիւնը շրջաբերականով մը կը յայտնէ թէ կալուածական հասոյթներէն աւելցած դրամները, ինչպէս նաեւ կալուածներու վաճառումով գոյացած՝ գումարները «Վագֆի դրամներու տնօրէնութեան» մօտ ի պահ պիտի մնան՝ հասութեաբեր վիճակի վերածելու համար: Կ'աւելցնէ նաեւ, թէ 25 ոսկիէ աւելի շինութեան եւ նորոգութեան ծախքերու համար, պիտի առնուի «Էվգաֆի տնօրէնութեան» արտօնութիւնը⁸²:

13 Յունիս 1935 թ., «Քաղաքային Օրէնքի» գործադրութենէն 9 տարի վերջ (4 Հոկտեմբեր 1926) կը հրատարակուի «Վագրֆներու օրէնքը»՝ որ կը բաղկանայ 46 յօդուածներէ եւ Թուրքիոյ համայնքներուն (Ճեմաաթ) վագֆները օրինականացնելու բնոյթը կ'ունենայ, գործադրութեան կը դրուի 13 Դեկտեմբեր 1935-ին «2762 թիւ օրէնք» անունով: «Վագրֆներու Օրէնքով» փոքրամասնութեանց վագրֆները որպէս «միւլհագ» այսինքն կապուած վագֆ կ'ընդունուին եւ միւթէվէլիներու մատակարարութեան կը յանձնուին: Այսպէս համայնքները կարելիութիւնը կ'ունենան ըստ աւանդութեան իրենք ընտրել իրենց վագֆներու վարչայինները: Օրէնքով «վագրֆ» կը նկատուին այն ազգապատկան կալուածները, որոնք առնուազն 15 տարի գործածուած են իբրեւ «վագֆ», համայնքներու կողմէ: «Վագֆներու Օրէնք»ին համաձայն մատակարար մարմիններէն կը պահանջուի պատրաստել իրենց տրամադրութեան տակ գտնուող «վագֆ»ներուն ցանկերը եւ հաշուեկշիռին ներկայացնել պատկանեալ Վագֆներու Տնօրէնութեան, մինչեւ 1936 մարտի 12-ը եւ ստանալ վկայագիր⁸³: Առանց այս վկայագրի, որն կը տրուի Ատենապետին, կարելի չըլլար ներկայացնել առարկութիւններ՝ համայնքային իրաւունքները պաշտպանելու համար: Հայոց Քաղաքական Ժողովը կը կազմէ «Վագֆներու մնայուն Յանձնաժողով», որն հարեւան համայնքներու ներկայացուցիչներուն հետ սերտօրէն խորհրդակցելով կ'աշխատի եւ յայտագիրները կը պատրաստուին Յանձնաժողովի հսկողութեան տակ եւ պայմանաժամին կը ներկայացուին պատկան մարմիններուն: Յոյն համայնքի ներկայացուցիչները, մինչեւ պայմանաժամին վերջըներ օրը օրինաւոր առարկութիւն կը կատարեն, բայց անլսելի կը մնայ: Վագֆներու Տնօրէնութիւնը կը յայտարարէ, թէ «հրաժարեալ» պիտի նկատուին այն Թաղային մատակարար մարմինները, որոնք պայմանաժամին չեն ներկայացուցած յայտագրերը: Ուստի Յոյն համայնքն ալ համակերպելով կացութեան, վերջին օրը կը ներկայացնէ յայտագրերը⁸⁴:

Իսկ 1 Օգոստոս 1936-ին 2/5042 թիւ որոշումնագիրով գործադրութեան դրուած Վագրֆներու կանոնագիրը կը ճշդէ վագրֆներուն եւ ասոնց հասութեաբեր կալուածներուն տեսակները եւ արձանագրութեան ու մատակարարութեան ձեւերը⁸⁵:

⁸² Ազդարար, 19.V.1936:

⁸³ Նոյն տեղէն, 29.II.1936:

⁸⁴ Գույումճեան Լ., Հայ Համայնքային Անցուդարձեր 1927-1950, Իսթանպուլ 1950, էջ 57:

⁸⁵ Գույումճեան Լ., Հայ Համայնքային Բարենպաստակ Հաստատութիւնները, Ընդարձակ Տարեցոյց Ս. Փրկիչ Հիւանդանոցի 1938, Ստամպուլ, 1939, էջ 24:

Օրէնքէն եւ կանոնագրէն վերջ 7 Ապրիլ 1937-ին 3574 համար պաշտօնաթերթին մէջ կը հրատարակուի «Ո՛չ-իսլամներու վերաբերեալ վագֆներուն միւթեվէլիները ինչպէ՛ս պիտի կարգուին» վերնագիրը կրող Հրահանգ մը, որն նպատակ կ'ունենայ որոշել ոչ-իսլամ «վագֆներու» միւթեվէլիներուն (մատակարար) նշանակուելու (թային) ձեւերը: Հրահանգը թաղային մարմիններու կազմը ջնջելու բնոյթը կ'ունենայ, ինչ որ հիմնովին հակառակ կըլլայ «2762 թիւ վագֆներու օրէնքին» տրամադրութիւններուն: «Յանձնաժողովը» քաջ գիտնալով, որ «օրէնքին բացատրագիրը կրնայ ըլլալ պարզապէս, հրահանգի փոփոխութեան համար օրինաւոր դիտողութիւն կը ներկայացնէ Վագֆներու Տնօրէնութեան, որն դիմելով Ազգային Մեծ Ժողովին «Հրահանգը» բարեփոխել կուտայ Օրէնքի»⁸⁶:

Այսպէս՝ 28 Յունիս 1938-ին 3513 թիւ օրէնքով, փոփոխութեան կենթարկուին 1935 թ. եւ 2762 թիւ «Վագֆներու Օրէնքին» առաջին եւ 18-րդ յօդուածները եւ կ'ընդունուի «անհատ մատակարարի» (Թէք միւթեվէլի) դրութիւնը⁸⁷, ուր մատակարարները պաշտօնի կը կոչուին կառավարութեան կողմէ, կատարուած քննութեան յաջողութիւն արձանագրելէ յետոյ⁸⁸: 14 Յուլիս 1938 թուակիր 3514 համար օրէնքով, «անհատ մատակարարի» դրութեամբ Պոլսահայ թաղային մարմինները կենթարկուին «Վագֆներու» վարչութեան հակակշռին: Իսկ միւս փոքրամասնութիւնները կը շարունակեն իրենց համայնքային գործերը մատակարարել, իրենց աւանդութիւններուն համաձայն⁸⁹: Վագֆներու օրէնքով ոչ-իսլամ փոքրամասնութեանց բոլոր հաստատութիւններուն տնօրինումը կը տրուի Վագֆներու Ընդհանուր Տնօրէնութեան, այսինքն Պետութիւնը կը միջամտէ այս հաստատութեանց ներքին գործերուն, որը բոլորովին խոտոր կը հանդիսանայ Լոզանի Դաշնագրի 40 յօդուածին⁹⁰:

1960-ական թթ., երբ Թուրքիոյ եւ Յունաստանի միջեւ կը ծագի Կիպրոսի հարցը, Վագֆներու Ընդհանուր Տնօրէնութիւնը ոչ-իսլամ համայնքային վագֆներէն կը պահանջէ ներկայացնել՝ իրենց անշարժ գոյքերուն կտակագիրները (վագֆիյէ) եւ քանի որ անոնք հիմնադրուած ըլլալով Օսմանեան կայսրութեան շրջանին, չեն ունենար նման կտակագիրներ, որպէս կտակագիր կընդունի 1936 թ. պատրաստուած յայտագրերը, ուր բնականաբար գոյութիւն չունենար

⁸⁶ **Գոյումճեան Լ.,** Հայ Համայնքային Անցուդարձեր, էջ 61-62:

⁸⁷ «Անհատ մատակարարի» դրութիւնը, որ չափազանց վնասաբեր կը հանդիսանայ համայնքին, կը տեւէ մինչեւ 4 Յունիս 1949:

⁸⁸ **Macar Elcin,** Cumhuriyet Doneminde Istanbul Rum Patrikhanesi-Istanbul-2003, s. 164:

⁸⁹ **Գոյումճեան Լ.,** Հայ Համայնքային Անցուդարձեր, էջ 43:

⁹⁰ Յոդուած 40. Ոչ-իսլամ փոքրամասնութեանց վերաբերող թուրք հպատակները թէ գործքով եւ թէ իրաւունքով, միւս թուրք հպատակներուն համար կիրարկուած նոյն գործառնութիւններէն եւ ապահովութիւններէն պիտի օգտուին: Ասոնք, մասնաւորաբար – ծախքը իրենցմէ ըլլալու պայմանով – բարենպաստակ, կրօնական եւ ընկերային ամէն տեսակ հաստատութիւններ հիմնելու, վարելու եւ հսկելու, եւ այս տեղերուն մէջ, իրենց լեզուն ազատօրէն գործածելու եւ կրօնական արարողութիւնները ազատօրէն կատարելու մասին, հաւասար իրաւունքներ պիտի վայելեն:

ն'ել յօղուած սոյն հաստատութեանց ապագային ձեռք բերելիք անշարժ գոյքերուն մասին: Վագֆներու Ընդհանուր Տնօրէնութիւնը օգտուելով այս բնական պակասութիւններէն կ'որոշէ, թէ այս ազգային հաստատութիւնները 1936 թ. վերջ իրաւունք չունին տիրանալու որեւէ անշարժ գոյքի: Ուստի, սոյն թուականէն վերջ գնելով, ժառանգութեամբ, նուիրատուութեամբ կամ կտակով ձեռք բերուած բոլոր ինչքերը կ'առնուի իրենց ձեռքէն⁹¹ եւ կը վերադարձուին նախորդ տերերուն կամ անոնց ժառանգորդներուն իսկ այս վերջիններու բացակայութեան պարագային կ'անցնի Վագֆներու Ընդհանուր Տնօրէնութեան, Պետական գանձին կամ Պետական կալուածի, որոնց փոխարէն ոչ մի հատուցում կը կատարուի համայնքին:

Հաթայի միացման հարցը: Հաթայը (Ալէքսանդրէտի սանճակ), որ 1920 թ. կ'անցնի Ֆրանսայի մանդատին յանձնուած Սիրիայի կազմին մէջ, 1937 թ. սկսեալ ձեւականօրէն մնալով հանդերձ Սիրիայի կազմին մէջ, կ'անցնի Ֆրանսայի եւ Թուրքիայի համատեղ հսկողութեան տակ: Իսկ 1938-ին հոն կը ստեղծուի Հաթայի ինքնավար պետութիւնը⁹²: 1938-ի Մայիսին, Հաթայի Արաբ, Հայ եւ Թուրք տարրերու միջեւ էթնիկ բախումները կը սաստկանան, թուրք թերթերը իրենց սինակները կը տրամադրեն սոյն նիւթին: Գրեթէ բոլոր թերթերը իրենց առաջին էջերն կը տրամադրեն այն լուրին, որ Հաթայի Հայ տարրին կողմէ կը կատարուին կոտորած՝ հանդէպ Թուրքերուն, որուն պատճառաւ Պոլսահայերն ծանր ճնշման կենթարկուին:

Երբ 1939 Յունիսին, Թուրքիոյ եւ Ֆրանսայի միջեւ ստորագրուող պայմանագրով Հաթայը կը միանայ Թուրքիոյ, Մերոպ Նարոյան Պատրիարք կ'արտայայտուի, թէ Թուրքիոյ հայերը ուրախութեամբ կ'ողջունեն այս միացումը, ինչպէս նաեւ Հաթայի հայերը Պատրիարքարան ուղարկուած հեռագրով կը յայտնեն իրենց խոր երախտիքը ու հաւատարմութիւնը՝ Թուրքիոյ Հանրապետական կառավարութեան, ազգային պետ Իսմէթ Ինէժնիւի եւ համայն Թուրք ազգին⁹³: Բայց հակառակ Նարոյեան Պատրիարքի այս արտայայտութեան, յաջորդ օրուան «Սօն Թէկրաֆ» օրաթերթը կը գրէ, թէ Հաթայի հայերը մեծամասնութեամբ կ'անցնին Սուրիա: Մեծ հաւանականութեամբ այս գաղթը կը շարունակուի մինչեւ Յուլիսի 23-ը քանի որ Եունուս Նատի «Ճումհուրիյէթ» օրաթերթի 20 Յուլիս թուակիր իր խմբագրականին մէջ կը գրէ, թէ անհրաժեշտ չէ գաղթել Սուրիա⁹⁴:

Հաւաքականութեանց օրէնքն ու փոքրամասնութիւնները: Թուրք Հանրապետական Կառավարութեան կողմէ Ազգային Մեծ Ժողովին կը յանձնուի Հաւաքականութեանց (Ընկերակցութեանց) Օրէնքին 8 Ապրիլ 1930 թ. եւ թիվ 6/2012 29 յօդուածներէ բաղկացեալ նախա-

⁹¹ Վճռաբեկի 6 Յուլիս 1971 թուական եւ E.4449, K.4339 թիվ որոշումը հետեւեալն է. «Ոչ-թուրքերու կազմած բարոյական անձնաւորութիւններուն արգիլուած է ձեռք բերել անշարժ գոյք»:

⁹² Հայկական Հարց Հանրագիտարան, Ե., 1996, էջ 23:

⁹³ Cumhuriyet, 25.VI.1939.

⁹⁴ Okutan M. Cağatay, Tek Parti Doneminde Azınlık Politikaları, s. 268-270.

զիծը, ինչպէս նաեւ 5 Յունիս 1933 թ. եւ թիվ 6/1771 փոքրամասնութեանց կրօնական հաստատութիւնները մատակարարելու մասին 6 յօդուածներէ բաղկացեալ ուրուագիծը⁹⁵: Միացեալ նախագիծը Ընդհանուր ժողովէն ընդունուելով 14 Յուլիս 1938 թ. պաշտօնաթերթին մէջ կը հրատարակուի՝ թիւ 3512 «Հաւաքականութեանց Օրէնքը» 42 յօդուածներով, որն կը սկսի գործադրուիլ 1939 Օգոստոս 1 թուականէն սկսեալ եւ կ'ունենայ տրամադրութիւններ երկրին ոչ-իսլամ ժողովուրդներուն համար: Հետեւաբար փոքրամասնութիւնները կը պարտաւորուին իրենց կազմակերպութիւնները յարմարցնել այդ տրամադրութիւններուն: Օրէնքը կը հաստատէ ապակեղորոնացման դրութիւնը, որու 39-րդ յօդուածին տրամադրութեան համաձայն «Բարեգործական, կրօնական, ընկերային, առողջապահական, կրթական եւ մշակութային բոլոր հաստատութիւնները կը մատակարարուին օրէնքին տրամադրութիւններուն համաձայն աշխարհիկ անձերէ կազմուած մարմիններու կողմէ: Իսկ օրէնքին հրատարակութենէն առաջ կազմուած նոյն տեսակի մարմինները կը պարտաւորուին մէկ տարուայ ընթացքին պարտադրեալ պայմաններուն պատշաճեցնել ինքզինքնին»⁹⁶: Օրէնքը չարտօնէր կրօնական հանգամանք ունեցող ոչ մէկ ընկերակցութեան կամ միութեան գոյութիւնը: Կը փակուին եկեղեցիներու մատակարարութեան համար հիմնուած կազմակերպութիւնները: Օրէնքի գործադրութեամբ թրքացման կ'յենթարկուին նաեւ փոքրամասնութեանց մարզական ակումբներու անունները: Այսպէս՝ Յոյներուն «Բերան» կ'ըլլայ «Պէյօղլու», «Թաթաւլա»՝ «Քուրթուլու», Հայոց «Էսսայեան Մարզական ակումբը» կ'առնէ «Շիշլի» անունը⁹⁷: Հայոց Քաղաքական ժողովը մտավախութեամբ, 15 Յուլիս 1939-ին «լուծեալ» կը հռչակէ ինքզինքը, իսկ միւս յարանուանութիւնները կը շարունակեն իրենց կրօնական, վարչական, տնտեսական ու մատակարարական գործերը ըստ առաջնոյն: Ուրեմն՝ Միակուսակցական շրջանին Թուրքիոյ Հանրապետութեան նպատակը կ'ըլլայ ջլատել ոչ-թուրք ազգային փոքրամասնութեանց համայնքները, ոչ միայն իբրեւ ազգային միաւորներ այլ եւ կրօնական կազմակերպութիւններ: Ճիշտ է, որ աշխարհականութիւնը կը ներմուծուի թրքական սահմանադրութեան մէջ, իբրեւ մին պետութեան սկզբունքներէն, բայց իրականին իբրեւ հիմնական սկզբունք կը հետապնդուի թրքացման քաղաքականութիւն: Քեմալապետութեան հիմնական ծրագիրը կ'ըլլայ կ'ազմել «միատարր եւ միաձոյլ Թուրքիա»: Ազգայնացման ընթացքին Թուրքիոյ փոքրամասնութիւնները արմատապէս թրքացնելու համար պայքարի կը ձեռնարկէ ոչ միայն կառավարութիւնը, այլ նաեւ Թուրք մամուլը եւ թուրք ժողովուրդը, որոնք ոչ-իսլամ փոքրամասնութեանց հանդէպ միասնաբար կը գործադրեն վարկաբեկիչ խտրականութիւն մը:

Թուրքիոյ Հանրապետութեան շրջանին հրատարակուող երեք օրէնքներէն առաջինը կ'արգիլէ արտասահման մեկնող հայերուն վե-

⁹⁵ Գույումճեան Լ., *նշուած աշխ., էջ 19*:

⁹⁶ *Նոյն տեղէն, էջ 29*:

⁹⁷ Rifat Bali, *Cumhuriyet Yıllarında Türkiye Yahudileri*, s. 302.

քաղաքներ, երկրորդը կը ջնջէ որոշ ժամանակ Թուրքիայ չգտնուողներուն քաղաքացիական իրաւունքները, իսկ երրորդը կ'ապաստեփականացնէ քաղաքացի չեղողներուն ինչքերը⁹⁸:

Իսկ փոքրամասնութեանց անհատական սեփականութեան իւրացման վերջին քայլը կ'ըլլայ 11 Նոյեմբեր 1942 թուակիր եւ թիվ 4305 «Ունեւորութեան տուրքի օրէնքը», ուր ամէն ոչ-իսլամ քաղաքացի կը պարտաւորուի վճարել առնուազն 500 ոսկի տուրք: Անոնք, որոնք 15 օրուան ընթացքին չեն կրնար վճարել վերոյիշեալ գումարը, կը դրկուին Աշգալէ՝ հաւաքավայրեր եւ ծանր պայմաններու տակ աշխատելով կը վճարեն իրենց տուրքը⁹⁹: Այս օրէնքի գործադրութեամբ, կը յառաջանան տուրքը վճարելու պարտադրուող ոչիսլամներու ինչքերուն ջնջին գումարներով տիրացող նոր թուրք սեփականատէրեր: Այսպիսով Թուրքիոյ Հանրապետութիւնը կը յաջողի իրականացնել երկրի տնտեսութիւնը թրքացնելու քաղաքականութիւնը:

НАЦИОНАЛЬНЫЕ МЕНЬШИНСТВА ТУРЕЦКОЙ РЕСПУБЛИКИ В 1923-1939 ГГ.

МИРОГЛУ АРМАВЕНИ (Турция, г. Стамбул)

Резюме

Граждане, не исповедующие ислам (греки, армяне, евреи), считаются в Турции национальными меньшинствами, что имеет свои исторические, политические и идеологические причины. Кемалистский национализм в первые годы республики преследовал представителей национальных меньшинств, навязывая им турецкий язык и культуру (приоритет ислама, диктат турецкого языка в школах и учреждениях), что не могло не отразиться на национальной самости армян.

Согласно закону, принятому в июне 1933 г., правительство ликвидировало национальные и гражданские собрания представителей других религий, участковые и учебные советы, школьные попечительства, урезало права патриархов (греческого и армянского) и раввина, доведя их до статуса духовного пастыря. Ту же цель преследовал закон о фамилиях, национальной одежде, вакуфах, который ограничивал национальные и религиозные права бывших миллетов.

⁹⁸ Mahcupyan E., Biz Tarihimizle Barışız, Taraf Gazetesi, 23.XII.2008.

⁹⁹ Mahcupyan E., İcimizdeki Oteki, İstanbul, 2005, s. 270.